

Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ (ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ) «ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱՅԻ» ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅԵՐ Ե.Ա. Միրզոյան

Հայոց լեզվի և նրա դասական դման մեթոդիկայի ամբիոն

Ղարաբաղի բարբառով գրված «Ձուռնա-Տմբլա» ֆեյխտոնների ժողովածուն լավագույնս արդարացնում է հեղինակի նպատակադրումը՝ նրզիծանքի միջոցով պատկերել հայ հասարակական կյանքը Շուշիում և մոտացությունից փրկել Ղարաբաղի բարբառի հարուստ բառազանգը:

Բարբառները եղել են եւ մնում են գրական լեզվի հարստացման աղբյուր, եւ դա առավելապէս կատարվում է գեղարվեստական խոսքի միջոցով:

XIX դարավերջին եւ XX դարի առաջին տասնամյակում Ղարաբաղի բարբառով հրատարակվեցին մի շարք գործեր¹:

Համեմատելով այդ գրվածքների լեզուն եւ ոճը՝ գալիս ենք այն նգրակագության, որ այս նրկերի լեզուն իրենց բառակազմական ու ձեւաբանական իրողություններով, ներկայացնում է Ղարաբաղի տարբեր շրջանների խոսվածքները եւ արտասանությունը:

Հրատարակված նրկերի լեզվին գնրագանցում է Մելիք-Շահնազարյանի ֆեյխտոնների լեզուն՝ հյութեղ, հարուստ բառապաշարով, բառակազմական հետաքրքիր կառույցներով:

Մեծ է Կ. Մելիք-Շահնազարյանի ներդրումը արեւելահայ նրզիծական գրականության, ազգագրության եւ բանահյուսության, բանասիրության, գյուղատնտեսության եւ մանկական գրականության գարգացման գործում:

Բազմավաստակ գրողը եւ մանկավարժը ունի տպագրված 60-ից ավելի աշխատություններ եւ անտիպ 72 գրական, բանասիրական, մանկական գրվածքներ, որոնք, նրա կտակի համաձայն, պահվում են Հայաստանի Եղ.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի Մելիք-Շահնազարյանի ֆոնդում:

Բանահյուսական եւ բանասիրական մեծ արժեք են ներկայացնում Ղարաբաղի բարբառով գրված անտիպ «Ղարաբաղցիների օրինանքներ եւ հայիոյանքներ», «Հանելուկներ», «Պնգլիք» ենթավերնագրով, «Շուտասնելուկներ...», «Առակներ, առած-

ներ», «Տնային բժշկությունը Ղարաբաղում» աշխատությունները:

Մելիք-Շահնազարյանը «Ձուռնա-Տմբլայի» առաջին հատորի (1907թ.) առաջաբանում գրել է. «Հրատարակչության տալով Ղարաբաղի լեզվով մեր գրած ֆեյխտոնները, մենք նպատակ ենք ունեցել ի մի ժողովել այն հատ ու կտոր հողվածները, որոնք լույս են տեսել այս ու այն թերթերում¹, որպեսզի թերթագրած լինենք Ղարաբաղի լեզվով հետաքրքրվող բանասերների գործը եւ միեւնոյն ժամանակ երեւան հանած լինենք մեր ընտանեկան նիստ ու կացի եւ հասարակական գործերի ու գործիչների աշքի ընկնող պակասությունները» (1-2):

Նշեցնելի այս խոսքից եւ հողվածներից նրեւում է, որ Կ. Մելիք-Շահնազարյանը իր առաջնահերթ նպատակը համարել է լեզվական խնդիրը եւ ափսոսում էր, որ Ղարաբաղի բարբառը, որ իր առանձնահատկությունների ունի, իր դարձվածները, ընտիր եւ ճոխ բառերը, դեռ լուրջ ուսումնասիրության նյութ չի դարձրել, այնինչ «այս ու այն հանգամանքների շնորհիվ հետզհետեւ մոռացվողքան է տրվում, աղավաղվում եւ իր նպակական վիճակից հեռանում»:(1-3)

Ավելի քան մեկդարյա հետազոտությունից ուսումնասիրելով բարբառով գրված նրա ստեղծագործությունների բառապաշարը, նկատում ենք, որ տեղին էր հեղինակի մտավախությունն այն առումով, որ այսօրվա նոր սերունդը, խոսելով Ղարաբաղի բարբառով, չի օգտագործում շատ բայախի բարբառային բառեր, որոնց իմաստը չի գիտակցում, շատ արտահայտություններ ու դարձվածներ, փոխադայ բառեր ու օտարաբանություններ, դուրս են մղվել բարբառախոս նրիտասարգության բառապաշարից, թվում է, թե բարբառը աստիճանաբար կորցնելու է ձեւաբանական ու քերականական շատ կառույցներ:

¹ Իր ֆեյխտոնները եւ գյուղատնտեսական հողվածները Մելիք-Շահնազարյանը տպագրել է «Նոր դար» թերթում: Ընթերցողները անհամբերությամբ էին սպասում Տմբլայի խաչանի գրույցներին:

Այդուհանդերձ, Կ.Մելիք-Շահնագարյանը նույնպիսի հմտությամբ է օգտվել Ղարաբաղի բարբառի հարուստ բառազանձից, արտահայտչական միջոցներից ու պատկերավորման հնարավորություններից, ինչպես Պարոնյանն ու Օտյանը Պոլսի բարբառից, Սայաթա-Նովան ու Մուսղուկյանը թիֆլիսահայ բարբառից: Եվ նթն այսօր Կ. Մելիք-Շահնագարյանի անունը քիչ է հայտնի մեր հասարակությանը. պատճառը այն է, որ բարբառով գրված նրա գրական աշխատությունները այնքան էլ մատչելի չեն հայ ընթերցող հասարակայնության թուր խավերին, ինչպես նաև այն, որ առաջին հրատարակությունից հետո այլևս չեն հրատարակվել, եւ պահպանվել են բնագրի միայն եզակի օրինակներ:

Ֆելիստոսների այս շարքը գրված էր լրագրի համար: Առօրյա հարցերը շոշափելով գրողը աշխատել է իր նրզիծանքով ուժ տալ լրագրի առաջնորդողին: Եվ բնական է, որ առօրյա հարցերը, կորցնելով իրենց հրատապությունը, կորցրել են նւ իրենց թարմությունը: Այսօրվա ընթերցողը հազիվ մի նրկու տասնյակ մնայուն եւ արդիական հեղեղություն ունեցող ֆելիստոսներ գտնի նրա գրական ստեղծագործություններում, որոնք հաճույքով կարդացվում են ու այսօր էլ ծիծաղ առաջացնում: Բայց այդ քչերի մեջ էլ այնքան տաղանդ կա, որ Կ.Մելիք-Շահնագարյանը իրավամբ արժանի է մեր գրավանդության պատմության մեջ իր տեղի ունենալու:

«Նրա ստեղծագործությունների մեջ հետախույս է հայ գրողների ազդեցությունը ըստ բովանդակության եւ ձևի: Արեփանի պես գործ է անում նմանահնչյուն բառերի կուտակումներ, համեմատությունները՝ Պատկանյանի հակադրություններն են, շուրջնու մոդայասիիրությունը քննադատում է Րաֆֆու՝ թիֆլիսցոց բարբառով գրած ոտանավորների նրզիծանքով: Իսկ նրբ հարստությունն է աղբատությունը է համեմատում, կամ բարոյական արատներն է մատնանշում, Ֆրիկի կամ Խոթնանցու ռճն է հրապարակ բերում» (3-254):

Շատ լավ գիտակցելով, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարի գարգացման հիմքը բարբառներն են, որ նրանք են գրական լեզվին շունչ ու կենդանություն մատակարարում, գրական հայերենի, գրաբարի հմուտ գիտակը, ռուսերենին, ֆրանսերենին հիանալի տիրապետող գրողը ընտրեց Ղարաբաղի բարբառը եւ այնպես ստեղծագործեար օգտագործեց ժողովրդական խոսքի այդ անսպառ շտմաբանը, որ, թերթելով Մսահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բան» (1912թ.) եւ ակնամպր լեզվաբան Հրաչյա Աճառյանի «Հայերեն գավառական բառարանները» (1913թ.), նկատում ենք, որ Ղարաբաղի հարուստ բառազանձից

բերված օրինակների մեծ մասը Կ.Մելիք-Շահնագարյանի «Ջուսնա-Տմբլա» գրքից են:

«Բարբառային գրվածքը մի յուրահատկություն ունի: Շատերը գրում են բարբառով, բայց ուղղագրությունը թողնում են գրական, այնպես որ արտասանությունը չի ներկայանում իր հարազատ պատկերով: Այս պարագային լեզվաբանը կամ բարբառագետը չի կարող օգտվել պետք նկատ չափով եւ նույնիսկ շատ անգամ սխալ նգրականացության է հանգում: Այսպես են հատկապես Սրվանձտյանի եւ Հայկունու հավաքած ազգագրական նյութերը: Սրանք բարբառագիտական տեսակետից պետք է կորած համարել: Այս կողմից արժեքավոր են Մելիք-Շահնագարյանի գրածները, որոնց մեջ հեղինակն աշխատել է ըստ կարելվույն հավատարմությամբ ներկայացնելու Ղարաբաղի (Շուշու) ժողովրդական արտասանությունը: Անագինք ըստ կարելվույն, որովհետև Ղարաբաղի բարբառն, ունենալով զանազան յուրահատուկ հնչյուններ, կարելի չէ հայերենի սովորական այբուբենով պատկերացնել: Մելիք-Շահնագարյանը չի թերացել այս յուրահատուկ հնչյունների վերարտադրմամբ բռնել մի այնպիսի ճանապարհ, որ գոհացնի թե՛ գիտական ճշտությունը ընտրող բարբառագետին եւ թե՛ չլերտներենցին հասարակ ընթերցողին» (4-256):

Չնայած իր այս գնահատականին՝ բազմավաստակ հայագետ Հրաչյա Աճառյանը իր «Բնությունը Ղարաբաղի բարբառի» ուսումնասիրության մեջ նշել է Ղարաբաղի որոշ խոսվածքային տարբերություններ: «Ջուսնա-Տմբլայում» գետնոված ֆելիստոսների լեզուն, հեղինակի խոստանալույթյամբ «ոչ թե Ղարաբաղի այս կամ այն գավառի, օրինակ՝ Վարանդայի, Մաչինի, Տիգակի կամ Միսիսիանի լեզուն է, իսկ այդ գավառաբարբառների հղկվածն ու կոկկվածը, որ 70-80-ական թթ. գործադրվում էր Շուշի քաղաքում» (1-2):

Կ. Մելիք-Շահնագարյանը առաջին հայ գրողն էր, որ իր ֆելիստոսների համար ընտրեց Ղարաբաղի ճուխ, կենդանի ու պատկերավոր բարբառը, սկսած 1878թ., երբ առաջին անգամ սկսեց գրել «Ըլըրցն կնանց պրնիքնյալը», հետո՝ «Տնգլաբազ», եւ ապա՝ «Ջուսնա-Տմբլայի» շարքը, որոնք պարբերաբար լույս են տեսնել «Նոր դարում», ապա արտատպվել առանձին գրքով:

Վարդան գրողը իր գրքի մեջ որպես գրական կերպար է ընտրել հասարակ մի գյուղացու, որը Ղարաբաղի հայ գյուղերից մեկից նկել է Շուշի (հիշենք, որ Ն. Աբովյանից հետո մեր գրականության մեջ ընդունված էր հասարակ գյուղացուն գրական հերոս դարձնել) եւ Տմբլայի խաչան անունով (որի հետ նույնանում է հեղինակը) դարձել է թմբկահար, գուռաչի, մտնլ տուն առ տուն, ուր կար ուրախություն, նշանդներ

որոնք աշխատանքի տեղի համարակազմային կայանում տեղի ունեցող պախարակելի երևույթները են այդ ամենը նրգիծելով ու հուսմորով մատուցում է որոշակի ձևով՝ գոտեմա, տմբա, պարգավակիր, արալունի, թըլդրամ, դրամաֆոն, տիլիփոն, որոնց միջոցով իր ժողովրդի «առաջադրանք» է հասցնում աշխարհին՝ այդ ընթացքում ծալ-ծալ բացելով մայրենի լեզվի հարուստ շերտերը:

Կ.Մելիք-Շահնագարյանի ստեղծագործությունների լեզվի ուսումնասիրությունը պետք է սկսել գրողի օգտագործած բառապաշարի քննությունից, որովհետև բառապաշարի ուղղրտում հեղինակն իր մտքերի հաղորդման կամ ստեղծագործական նպատակագրմանը համապատասխան լեզվական միջոցների ընտրության ու գործածության լայն հնարավորություններ ունի: Գրողի լեզվի բառապաշարը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է նախ կատարել բառապաշարի դասակարգումը, իսկ բառապաշարի դասակարգման համար կարևոր նշանակություն ունի նրա օգտագործած բառերի բառարանը կազմելը (որին էլ ձեռնամուխ ենք եղել): Նման բառարանը ցույց կտա գրողի օգտագործած ընդհանուր բառարանակը, նրա վերաբերմունքը լեզվի բառապաշարի շերտերի նկատմամբ: Մ. Շահնագարյանը «Ձուռնա-Տմբալի» վերջում տվել է Ղարաբաղի բարբառի դժվարիմաց բառերի համառոտ բառարան, որը նրա օգտագործած բառապաշարի դժվարիմաց բառերի մոտ 5%-ն է կազմում:

Մելիք-Շահնագարյանի բառապաշարի զգալի մասը հայերեն ընդհանուր բառաֆոնդի բաժնի են, որոնք կան նաև ուրիշ բարբառներում: «Տազար օթ հարիթ օլսնասուն թիկն աշունտ մին թօխալ հոնիօն», Ծոշա Ղալին քիչէրը մարթալ իլգն աղ, վրերը բզարան ար կնամ, վրերն էլ դիզերան, վրերը թոփխանան, վրերը ժաման, նաւաշ ման կնովալ դըլըքթը գիդալ չըն»⁴ - այսպես է սկսում իր պատմություն Մելիք-Շահնագարյանը «Դըլըքն կնանոց արնըփնշակը» պատկերում (1-1):

Կ.Մելիք-Շահնագարյանի ստեղծագործությունների մյուս շերտը Ղարաբաղի բարբառի յուրահատուկ բաժնի են՝ ցիզիտն, գոգարդաթ (Յունվարի վեցին թաշախոստիս կեցի, ahiahinun նր իլալ, թա Ղալին իուսաներուած շիօլին ըխճկորանցը մհար գոգարդաթ ըն սարբալ...) (1-59), եղօնիզ (Հրէս մին իծծուն տրնկան ջախիլ թաշախոստիս կեցուած linozha կտրած, մին քանէ գամնի ու ըխճկորանց նհետ մարաքալ ա սարբալ, աւսը ըն ամէն տարի էտ ջախիլ-պառալը ճրերն ա կնամ...) (2-83), անփեշ-անփթթիլ-39, իրիսկիաւտ, շիմշաւտ, քթօլ, ալակուշ-կուշ, քիթաւնթուշ, կիշլիկիդ, շմբալուք, լուակ, օնգաւտը, շտնդ, խլըշկոտնի, խնչը-

տն, ծուլալ, խլըշլալի (2-78), արաթը (2-79), դեղոռանշ (1-78), ինչպես նաև հարադրական բայեր՝ արշա ընգնել, մտքին դօնը ընգնել, բիշտի-բիշտի անել, նի մննել եւ այլն:

Մրանք այն բառերն են, որ չեն մտնում գրական լեզվի բառային կազմի մեջ եւ ինչպես իրենց հնչյունական-ձեւաբանական առանձնահատկություններով, այնպես էլ գործածությամբ սահմանափակությամբ հանդիպողովում են ընդհանուր գործածություն ունեցող գրական բառերին:

Բնրված օրինակներից քննության առնենք մի քանի բառերի իմաստային նշանակությունը.

Չոգարդաթ բառը հանդիպում է եւ ծրդարդար ձևով. ակաղ. հրատարակության բացատրական բառարանում 3-րդ իմաստի տակ բացատրվում է՝ գատիլի նախորդ շաբաթվա տոնը, երբ նոր բողոքած ծառայուղերը օրհնում են, ծառագործար, տոն:

Աճառյանի գավառական բառարանում բացատրվում է՝ ծաղկագարը, իսկ Մելիք-Շահնագարյանը մկնաբանում է՝ ծաղկագարը, տօնածառ: Վերջին իմաստը համապատասխանում է տնքատում բերված մտքին՝ աղջիկների համար տոնածառ են սարքել:

Ծնոթեվաթ բառը բարբառում հանդիպում է եւ ծմբթեվեվաթ ձևով: Բացատրական բառարանում տրված է ծննդագաթա բառը:

Հր.Աճառյանի գավառական բառարանում ծննդագաթա բառի դիմաց բացատրվում է՝ մեղրո՞վ չինամ ձկանձող, խաւիծ կամ ուրիշ համով ուտելիք, որ իբրեւ նվեր ուղարկվում է ծննդկանին՝ նորածին մանկան մկրտության օրը: Իմա՝ Ղարաբաղում ընդունված է նորածնի 40 օրը լրանալուց հետո այցելել շնորհավորելու, աշխալուսարը տալու՝ նորածնի եւ մոր համար տարվող նվերներով, որին էլ «ծմբթեվեվաթ քինալ» են ասում:

Մելիք-Շահնագարյանի ստեղծագործություններում հանդիպում ենք Ղարաբաղի բարբառում գործածվող այնպիսի բառերի, որոնց արմատը գիտակցվում է, բայց իմաստը պարզ չէ, հանդիպում են եւ այնպիսի բառեր, որոնց արմատները չեն գիտակցվում.

ahunozha - էնա կարմուրջին հալալ կնըր ընցալի, տնսման անդուդնդան մին գիլըթըցա ա նր ինքմ, մին ծվվոց ծվլթոց կնամ, մին ուրոտըմ կծակին անքմ, վեր մարթու օշ օգոմա թա տանի (2-17):

Գավառական բառարանում գոռուրջոց բառի տակ բացատրվում է՝ գոռում, գոշում, աղմուկ, աղաղակ: Բացատրվում է առաջին արմատի իմաստով՝ գոռ - իսկ նրկորդ արմատի իմաստը պարզ չէ:

գրելթորոս - Մեղանքը մին խալիչայ քցած, էրկու գրելթորոս մարթէք ծրպատակ նրան նստած իրենենն ժողովուրթն, հարի երդայ սնու ու սպիտակ փող ին թուփ անըմ...

Բազատրական բառարանում տրված է գրենլ բառը - գրկնլ, կողոպտել, հարստահարել իմաստով:

գրենլ - գազմառական բառարանում նույն իմաստով չտուռգաբանված բառ է համարվում և նույնիսկ Ղարաբաղի բարբառի անունը չի նշվում: Իսկ թորոս արմատը հակված են կարծելու որ ինչու ժամանակ եղել է Թորոս անունով կողոպտիչ, հարստահարող մարդ, որն էլ որպես հասարակ գոյական գործածվելով, գրենլ արմատի հետ դարձել է ածական գրելթորոս մարդիկ:

արշա ընգնել - Բա խոի պէնը արշա ընգնելան ետը, էլ մէր հեմսքնարքըր ինալ կմնա՞, մընմա եա քինի ճիւրն ընգնի, եա իլած չիլածը տայ դրամափնու (2-163):

Բազատրական բառարանում **արշա** բարբառային բառի տակ բացատրվում է մի-հանել բայի հետ է գործածվում կազմելով հարադրություն՝ լույս ընկնել-կայտնվել, ծնվել, մեծանալ, աճել իմաստներով: Աճառյանի գազմառական բառարանում նա բացատրվում է՝ մեծնալ (տարիքով կամ դրամով), նշանավոր դառնալ, լույս ընկնել, հայտնվել, ինքզինքը հայտնել, թե ինքը ով է, սակայն արշա բառի ծագումը չստուգաբանված բառերի մեջ է դասվում:

Ղարաբաղի, Գորիսի, Երևանի բարբառներում գործածվում են նաեմ արշա գալ, արշա գցել, արշա քնել հարադրությունները: Ահա այս արշա կնալ, արշա քիցել, արշա ինգնել հարադրավոր բայերը համարծր են գրական լեզվում գործածվող աշխարհ գալ, աշխարհ գցել, աշխարհ ընկնել հարադրական բարդություններին և իրենց նշանակությամբ համապատասխանում են դրանց (Հայկ միայն Տերը քանդի ըտար աշխարհ քցողին տօնը հա - 2-163): **արշա-ն աշխարհ(ը)** բառի բարբառային յուրահատկություն է և առաջ է եկել հնչյունների անկման և դրափոխության հետևանքով. աշխարհ(ը)-աշխարհ-աշարք-արշա-արշա:

Մեկի-Ծահնագայանի բառապաշարի բառային կազմում գործածված են բավականաչափ փոխառություններ պարսկերենից կամ պարսկերենի միջնորդությամբ արաբերենից, նաեւ թուրքերենից, ռուսերենից:

Դա, բացի հայ բարբառների համար ընդհանուր օրինաչափություն լինելուց, բացատրվում է նա այն հանգամանքով, որ XIX դարի վերջին Շուշիի բնակչությանը գալի մասը մահմեդականներ էին: Չնայած, ըստ Մակար Բարխուդարյանի «Արցախ» աշխատությունից ըմբված վկայության, հայերն ու թուրքերը ապրում էին քաղաքի տարբեր մասերում, այնուամենայնիվ, թուրքերի խո-

սակցական լեզվից շատ բառեր ու արտահայտություններ գործածում էին հայերը, և նրանի թե այդ է պատճառը, որ Տմբալչի Նաչանի՝ հասարակության տարբեր խավերի հանդեպ իր վերաբերմունքն ու երգիծանքը դրսևորելիս բազմաթիվ թուրքերեն բառեր, արտահայտություններ, դարձվածներ ու համեմատություններ օգտագործել:

Ահա թուրքերեն բառերի մի շարք, որը շատ հաճախ է գործածվում նրա խոսքում՝ անգլամազ-հիմար, անհավատազող, ալազառավուտալա չոր քամի, ահալաթ - վիճակ, ահմնադի-պարնդանակ, աթաբաբանախնի, պազ, բէլջամուզ-անմաբուր, քոթմիշ լիննլ-լենվել, խնդրվել, բաթմիշ անն - կորցնել, ախմիշ աննլ-խոսել (հայերեն բայերի հետ հարադրություններ են կազմել), թեարշա-միայն թե, խօրագ-կերակուր ու այլն:

«Հնարմ» ստաբն էլ տեսնումա, վեր դորք **ալազ** շատ թինդ ա, **թուսալ** մին խլա հեմար հանըմ, տնդուտնող կոլ տալ տաւ...»:

«Թոփխանան նի մոի **phystop. phystp.** հի՞նչ **phystp.** հեմալած եղը վեր վեր ածիս էլալը կրիաքուի, էնքան թեմուդ աք, քիչէքը լօխ էլ ըրկաթած ըն գոլ տարին մին փեմասպանդա շօսն չի չինին, **chonnaweston** մէջին օգտեր կոլ տան, եա չէ գնխը, լէլը կոխի վէշ, վեր ըրուլիսաւ եա ճրըրլաւ մարթ ճոխտ վէննուր մէջին հանց **paupdhz** **ինն** վեր կարի վէշ թա տիւս կեագ, հունց վեր մեր **շարննին phystonim**» (2-25):

Փոխառյալ բառերի մի մասը գործածված է նրկորդական կամ այլ իմաստներով: Օրինակ՝ արաբերենից պարսկերենի միջնորդությամբ **մաթթահ- matteh** սրանչնի, հազվագյուտ, նշանակությունը գրողն օգտագործում է հեզնական իմաստով (վա՞), ընտրանց խնձողը էլ վեր քինի, ետ ար պակաս, Ծանի ալաճիգը հինչ **մաթթահա** լղար, հանց ա լա ալակուշլուշ ինի -2-63):

Փոխառյալ բառերի գործածությունը պետք է վերաբերի ոչ թե գրող-հեղինակին, այլ, որ այդ բառերը բարբառն ինքն է վերցրել ժամանակի ընթացքում և ոչ միայն օգտագործում է, այլև ներթարկել և ներթարկում է բառակազմական և քերականական իր ներքին ձևափոխություններին:

Փոխառյալ բառերի որոշ մասը այնպես է ձուլվել հիմնական բառապաշարին, որ դադարել է փոխառյալ լինելուց, դարձել է բարբառի հարազատ ու կենսունակ մասը և ներթարկվում է բարբառի քերականական օրինաչափություններին ու կանոններին:

Բազմաթիվ են բարբառում տեղ գտած ռուսերեն փոխառությունները:

Արժեք նշել նաև, որ Մեկի-Ծահնագայանի ստեղծագործություններում հաճախ հանդիպում ենք գրաբարյան բառերի

և արտահայտությունների՝ ձևաբանական կա-դապարներով: Ահա գրաբարյան բառերի և արտահայտությունների ավելորդ ծանրաբեռնումը: «Ա՛յն ունիցի ականջըս լսելու, լուիցն -1-66», «Ջոր ինչ փրթոնացն ես գայն կնրիցն» 1-130:

Մելիք-Ճահնագադարյանը նրբման հրապուրվում է ֆրանսերեն բառերով, որոշ արտահայտություններով՝ «մնամիս, բատոն, մնա-խա», «քուման սալա» և այլն: Մրանք խնդրում են լիարդ ծանրաբեռնում ստանալը: Այս հանգամանքը ժամանակին նկատել է Լեոն և արժեքավոր դիտողություններ արել:

«Նտարրորի ու պատկերավոր են խաչանի աֆորիզմները, որոնք նրա ստեղծագործություններին համ ու իտտ են տալիս և նպաստում, որ նրանք չհնանան: Կենցաղը փոխվում է, հնանում և մոռացվում: Այսոր չկա Շուշիի Թոփխանան, բայց Տմբլայի խաչանի մոտ այն կենդանի է իր «Էջնրի յարմուկայով», «Էլիա Էրգան անգամենրին իրանց պրպական տեղը կրղբորդնին, թա չէ Թոփխանան շնորքա ընգալա, հանցա մին գատ կուրգրած ինի - 1-75»:

Տմբլայի խաչանի նրգիծանքի հնարավորությունները բազմազան են: Նրա ասե-լիքը հրապցվում է առակի, առած-ասաց-վածքի, հանելուկի, դարձվածի, հաճախ էլ հարցունիործի ձևով:

«Հի՛ք պեղմա Թիֆլիսի Հայոց թիա-տըրը մին կարգին ընգին:

-Հիք վեր օդտին հյաքուն տափին նի կյա -1- 204»:

Ծարադրանքին բնորոշ է հարադիր և կրկնավոր բառերի գործածությունը՝ «դնաս-տա-դնաստա», «ջուտա-ջուտա», «տալան-ալ-լան», «ծիրտի-պիրտի, հադի-թուդի, հնաճիճ-մնաճիճ, սադ- սալամաթ, թակ ու միակ» և այլն:

Ժողովրդական բառ ու բանը, դիպուկ արտահայտությունները, ասացվածքները, պատկերավորման միջոցները նպաստում են նրկի գաղափարական հագեցվածությանը՝ «Իրքսիան հիլի, տըկըռիան ծիլի», «Հինչ պեն օնիվ կարմուռջումը, վեր պտատվիմ յա-փընջումը», «Մնասը փորն ընգալ» ասաց-վածքները հարիր են ժողովրդական մտածո-ղությանը և նրանց են հաղորդում ամբողջ պատումին:

Ծատ ղնպքերում Մելիք-Ճահնագադ-րյանը խոսքի ընդհանուր նրանզը պահպա-նելու համար չի խախտում պատումի լեզվի ներդաշնակությունը՝ չհորժարվելով բարբա-ռում՝ նման բառի համարժեքը չգտած բառի՝ այլ լեզվով օգտագործելուց:

Ամփոփում

Ուսումնասիրության է ներկայացված Տմբ-լայի խաչանի ստեղծագործություններից «Ջա-նա-Տմբլայի» բառապաշարի մի քանի շերտերի

ընտրությունը: Բնրված են լեզվի հիմնական բառա-փոխի վերաբերող բառեր՝ օրինակներով, բարբա-ռային որոշ բառերի մեկնություններ՝ իրենց օրի-նակներով, բարբառում հանդիպող գրաբարյան արտահայտություններ, փոխառյալ բառեր թուրքե-րենից, պարսկերենից, ռուսերենից, որոնք մեծ քա-նակությամբ գործածվում են ինչպես Ղարաբաղի բարբառում ընդհանրապես, այնպես էլ Մելիք-Ճահնագադարյանի ստեղծագործություններում:

Резюме

Изучению представляется словарный запас прозаического Тмбля Хачяна "Дурна-Тмбля", анализ некоторых его частей. Приведены слова, относящиеся к основному словарному фонду языка с привнесением некоторых диалектных слов, прозаических выразительных, встречающихся в диалектах, заимствованиях из турецкого, персидского, русского языков, которые в огромном количестве употребляются как в диалектах Карабага вообще, так и в прозаических К.Мелика-Пашабадяна.

ՃԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գ. Ճարախանյան, Սարի Բնդ և Գիքի, Կոտե՛կ հայոց աշխարհի, Թիֆլիս, 1862թ.:

Կ. Է. Մելիք-Ճահնագադարյան (Տմբլայի խաչան), Զոտեա-Տմբլայ, Ա. և Բ. գրքեր, Վլադադապատ, 1907, 1908, 33իկետների ժողովածու:

Ուխտա Գ. Բարխուդարյան, Մրազը տարին Կտարի, Ծալի, 1883թ.:

Մ. Բարխուդարյան, Պղը-Պոռի, Թիֆլիս, 1883թ.:

ՏՆազարյան, Ճրաբարդ քոլատկորի, Թիֆլիս, 1889թ.:

Տ. Կարյան, Ջանգուլումներ, Ագագյուղական համդեմ, 1908, հ.1:

2. Զ.Սճառյանը այս պիեսը դասել է «Ղարաբաղի մայր բարբառով» գրված աշխատությունների շարքը: Բարբառագետ Լյարո Դավթյանը իր «Անտային Ղարա-բաղի բարբառային քաղաք» աշխատության մեջ նշում է, որ այս պիեսի ոչ բացառությունները և ոչ էլ լեզուն Ղարաբաղի բարբառով չեն, որովհետև պիեսի լեզուն կիսապոսական է, եղած բարբառային և Լ Ջուրայի բարբառով է: 1966, Երևան էջ 8:

3. Իր ֆինիտները և գյուղատնտեսական իտղվածները Մելիք-Ճահնագադարյանը տպագրել է «Նոր-բար» թերթում: Ընթերցողները համաձայնությամբ էին ապրում Տմբլայի խաչանի գրույցներին:

4. «Ղարաբաղի լեզուի հեյլենիցի մի քանիսը մենք երևու-եղեր տառերով նշանակելիքը շատ ստեղծական և նշանավոր չունենալու համար՝ այնպես ոչ - վրե՛ջ, որվեր, տնաբեր»- գրում է հեղինակը:

Գրականություն

1. Կ. Մելիք-Ճահնագադարյան, Զոտեա-Տմբլայ, Միտադր, 1907թ.:

2. Կ. Մելիք-Ճահնագադարյան, Զոտեա-Տմբլայ, Միտադր, 1908թ.:

3. ԳԱՊ՝, Մելիք-Ճահնագադարյանի փոքր գ.254, Արևմտ Տերադրյան:

4. ԳԱՊ՝, Մելիք-Ճահնագադարյանի փոքր, գ. 256, Զր. Սճառյան:

5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բա-ռարան, ակադեմ. իրատ, 1969, Երևան:

6. Զր. Սճառյան, Գալախտական բառարան, 1913, Թիֆլիս:

7. Ս.Անտային, Հայոց բառարան, 1912, Վլադադապատ: